

ԱՅՈ-ՈՉ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԿՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ

ՂՈՒԿԱՍՅԱՆ Ս. Վ.

Նոր Կտակարանի չորս Ավետարանների շարքում Մարկոսի Ավետարանը Մատթեոսի Ավետարանից հետո երկրորդն է և ծավալով ամենափոքրը՝ բաղկացած 16 գլուխներից: Այա հաջորդում են Ղուկասի և Յովհաննեսի Ավետարանները:

Աստվածաշնչում առատորեն օգտագործված են լեզվի բոլոր հաղորդակցական տիպերը, որոնցից շատերը եզակի, ուրույն և ուսանելի լեզվակառույցներ են, արտահայտում են ամենատարբեր երանգավորումներ, հնչերանգներ և հոգեվիճակներ ու արժանի են ամենալուրջ ուսումնասիրության: Հատկապես կարևոր է Նոր Կտակարանի լեզվի հետազոտությունը, մանավանդ ավետարաններինը, որտեղ ամփոփված են Հիսուսի գործն ու խոսքը: Ավետարանների հարցական նախադասությունների ուսումնասիրությունը նույնպես մի առանձին կարևորություն է ստանում, որը կօգնի մեզ էլ ավելի հստակ պատկերացում կազմել Աստվածաշնչի լեզվական իրողությունների մասին և ավելի լավ ու բանիմաց թափանցել նրա խորհուրդների մեջ¹:

Մարկոսի և՛ աշխարհաբար, և՛ գրաբար Ավետարանում կա 100 հարցական նախադասություն, ընդ որում աշխարհաբարյան երկու հարցման դիմաց գրաբարյանն ունի պատմողական նախադասություն (3,2:13,35)², իսկ գրաբարյան մեկ հարցման դիմաց աշխարհաբարյանն ունի պատմողական նախադասություն (9,9), մյուս կողմից էլ գրաբարյան երկու հարցումներ աշխարհաբարյանում արտահայտված են մեկ հարցական նախադասությամբ (2,25-26):

Մարկոսի Ավետարանում հարցական նախադասությունները հանդես են գալիս ամենատարբեր կառուցվածքներով: Ավետարանում կան ինչպես միաբևեռ, այսինքն՝ միայն մեկ հարցում պարունակող, այնպես էլ բազմաբևեռ հարցումներ, այսինքն՝ մեկից ավելի հարցում պարունակողներ: Բազմաբևեռ հարցումներն իրենց հերթին կարող են լինել երկբևեռ, եռաբևեռ, քառաբևեռ և այլն: Ավետարանում կան նաև երկու տարբեր հարցումներից բաղկացած նախադասություններ, որոնք անվանում ենք *երկտեսակ հարցումներ*, երբ միասնաբար են հանդես գալիս *ինչու-որ* և *այո-ոչ* կամ *ինչու-որ* և *եղանականի՞չ* հարցումները և այլն, իսկ երկու և

¹ Մարկոսի Ավետարանի հարցական նախադասությունները մենք ուսումնասիրել ենք ըստ արևելահայերեն Աստվածաշնչի օրինակների, սակայն զուգահեռաբար տալիս ենք նաև գրաբար տարբերակները, որպեսզի գաղափար կազմենք, թե ինչ տեսք ունեն դրանք հին հայերենում: Ժամանակակից գրական արևելահայերենի հարցումները քաղված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ 1994 թվի Աստվածաշնչից, իսկ գրաբարյանները՝ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության՝ 1997 թ. հրատարակածից:

² Բերված թվերից առաջինը նշում է Մարկոսի Ավետարանի համապատասխան գլուխը, իսկ երկրորդը՝ համարը:

ավելի նույն հարցումներից կազմված նախադասություններն անվանում ենք *միատեսակ հարցումներ*:

Մարկոսի Ավետարանում *ինչու-որ* հարցումները քանակով բոլորից շատ են: Միաբնեռ *ինչու-որ* հարցումները 55-ն են, 10-ը բաղկացած են երկու *ինչու-որ* հարցումներից, իսկ 7-ը՝ մի կողմից՝ *ինչու-որ*, մյուս կողմից՝ *այո-ոչ* և ընտրանքային հարցումներից: Այսպիսով, Մարկոսի Ավետարանում ընդհանուր առմամբ կա 80 *ինչու-որ* հարցում, 37-ը՝ *այո-ոչ*, եղանականիշները՝ 6, ընտրանքայինները՝ 5: Հարցեր են տալիս Հիսուսը, նրա աշակերտները, ժողովուրդը, փարիսեցիները, օրենսգետները, Պիղատոսը և ուրիշներ: Բոլորից շատ հարցեր տալիս է Հիսուսը:

Մատթեոսի Ավետարանի պես Մարկոսի Ավետարանում էլ հիմնականում սկզբից բերվում է ավետարանչի խոսքը, որից հետո կետ է դրվում, և ապա չակերտների մեջ տրվում է համապատասխան հարցումը: Այդ խոսքն այստեղ նույնպես լինում է կարճ՝ բաղկացած երկու-երեք բառից և շատ ավելի երկար՝ բաղկացած անգամ երկու և երեք նախադասությունից:

Մատթեոսի Ավետարանում կան երկու ինքնուրույն հարցատեսակներ՝ իրենց բնորոշ կառուցվածքային և որոշակի պատասխաններ պահանջող յուրահատկություններով, որպիսիք չենք հանդիպել ո՛չ լեզվաբանական, ո՛չ էլ, մասնավորապես, գեղարվեստական գրականության մեջ (գուցե և լինեն): Առաջիններն անվանում ենք *երկկերպ*, օրինակ՝ «Ի՞նչ տեսնելու ելաք անապատում, հողմից շարժուող եղէ՞գ» (Մատթ. 11, 7), իսկ երկրորդները՝ *երկկերպ ընտրանքային հարցումներ*, օրինակ՝ «Յովհաննէսի մկրտութիւնը որտեղի՞ց էր՝ երկնքի՞ց, թե՞ մարդկանցից» (Մատթ. 21, 24-25): Մարկոսի Ավետարանում չկան երկկերպ և երկկերպ ընտրանքային հարցումներ, սակայն կա երկկերպ ընտրանքային հարցման մի ուրույն ենթատեսակ, որն անվանում ենք *երկկերպ զույգ ընտրանքայիններով հարցում*, ինչպես՝ «Շաբաթ օրով ի՞նչ բան է օրինավոր անել. բարի գո՞րծ գործել, թե՞ չարիք անել. մի հոգի՞ ազատել, թե՞ կորստյան մատնել» (3,4):

Նշենք, որ *այո-ոչ* հարցական նախադասությունների կառուցվածքը նման է պատմողականին, սակայն այստեղ անհայտ է նրա կառուցվածքային հարաբերությունը, այն է՝ ենթակայի և ստորոգյալի միջև եղած կապը, այսինքն՝ հայտնի չէ՝ այդ կապը հաստատական է, թե՞ ժխտական: Այս պատճառով էլ այս հարցումն անվանել ենք նաև *կապակցային հարցում*: Այսպիսի հարցական նախադասությունների դեպքում հարցումն արտահայտվում է միայն հարցական հնչերանգի միջոցով, և քանի որ անհայտ է այս հարցման ենթակայի և ստորոգյալի միջև եղած կապը (Այսօր գնա՞նք համերգ), ապա դրանց հաճախ տրվում են *այո ոչ* և սակավ դեպքերում՝ չեզոք պատասխաններ: Գործնականում սրանց կարող են տրվել ամենատարբեր պատասխաններ, որոնք, սակայն, հանդես են գալիս որպես նշված երեք պատասխանների զանազան դրսևորումներ: Դրանք, ավելի հաճախ *այո* և *ոչ* պատասխաններ տրվելու պատճառով, մենք,

հե-

տևելով անգլիական և ամերիկյան մի շարք հայտնի լեզվաբանների, անվանել ենք *այո-ոչ հարցումներ*³:

Մարկոսի Ավետարանում ընդհանուր առմամբ կա 31 *այո-ոչ* հարցում՝ 17-ը՝ միաբնեռ, 14-ը՝ բազմաբնեռ, ընդ որում, վերջիններից երկուսը բաղկացած են երկու *այո-ոչ*, իսկ 10-ը՝ *ինչու-որ* և *այո-ոչ* հարցումներից, որոնցից երեքի կազմում կա մեկ *ինչու-որ* և մեկ *այո-ոչ* հարցում, մեկի կազմում՝ մեկ *ինչու-որ* և երեք *այո-ոչ*, մեկի կազմում էլ՝ մեկ *ինչու-որ* և չորս *այո-ոչ* հարցում:

Միաբնեռ հարցումներ: Մարկոսի Ավետարանի միաբնեռ հարցումները ինչպես պարզ, այնպես էլ բարդ կառուցվածքի են: Բարդերն արտահայտում են տարաբնույթ ստորադասական և համադասական հարաբերություններ:

ա) *Պարզ միաբնեռ հարցումներ*. Պիղատոսը հարցրեց նրան և ասաց. «Դո՞ւ ես հրեաների թագավորը» - Եւ հարց գնա Պիղատոս եւ ասէ, Դո՞ւ ես թագաւորն Հրէից (15,2): Քահանայապետը կրկին անգամ հարցրեց նրան ու ասաց. «Դո՞ւ ես Քրիստոսը՝ օրինյալ Աստծու Որդին» - Դարձեալ քահանայապետն հարցանէր գնա կրկին անգամ եւ ասէր, Դո՞ւ ես Քրիստոս Որդի Աստուծոյ օրհնելոյն (14, 61): Հիսուս դարձավ և ասաց նրանց. «Սրերով և մահակներով դուրս եք եկել ինձ բռնելու որպէս ավագակի՞...» - Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, Իբրեւ ի վերայ աւագակի՞ ելէք սուսերօք եւ բրօք ունել զիս (14, 48):

բ) *Մեկ ստորադասական հարաբերությամբ հարցումներ*, որոնցից երկրորդը առաջադաս կոչակնում է. Իսկ փարիսեցիները մոտեցան և նրան փորձելով հարց տվին ու ասացին. «Օրինավո՞ր է, որ մարդ իր կնոջն արձակի»- Իսկ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին գնա եւ ասէին. Եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել (10,2): Իսկ ինքը նավախելի կողմը բարձի վրա ննջում էր. նրան արթնացրին և ասացին. «Վարդապե՛տ, քեզ համար բնավ հոգ չէ՞, որ ահա մենք կորչում ենք»- Եւ ինքն ննջեր ի խելս նաւին ի վերայ բարձի. զարթուցանէին գնա եւ ասէին, Վարդապետ, ոչի՞նչ է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ (4, 38): Պիղատոսը պատասխանեց և ասաց նրանց. «Ուզո՞ւմ եք, որ հրեաների արքային արձակեմ ձեզ համար» - Պատասխանի ետ Պիղատոս եւ ասէ ցնոսա, Կամի՞ք զի արձակեցից ձեզ զարքայն Հրէից (15, 9-10):

գ) *Երկու ստորադասական հարաբերությամբ հարցումներ*. Եվ սկսեց նրանց հետ առակներով խոսել և ասել. «... Դուք չե՞ք կարդացել գրքի այն խոսքը, թե՛ այն քարը, որ կառուցողները անարգեցին, նա՛ էղավ անկյունաքար:» - Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք եւ ասել, Եւ ո՞չ զգիրն գայն իցէ ընթերցեալ ձեր, թէ Զվեմն գոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան (12, 10): Եվ նրան ուշադրությամբ դիտում էին՝ տեսնելու, թե շաբաթ օրով նրան կը բժշկի՞, որպեսզի ամբաստանեն նրան - Եւ

³ *Այո-ոչ* հարցումների մասին ավելի հանգամանալից տե՛ս **Ղուկասյան Ս.**, Ժամանակակից հայերենի հարցատեսակները (Լեզվի և ոճի հարցեր, պր. V, Ե., 1978, էջ 119-122):

սպասեին նմա եթե բժշկեսցէ զնա ի շաբաթուն, զի չարախօսեսցեն զնմանէ (3, 2):

դ) *Բարդ համադասական հարցումներ*. Ասացին նրան. «Գնանք գնե՞նք երկու հարյուր դահեկանի հաց և նրանց տանք ուտելու»- ... ասեն ցնա, Երթիցուք գնեսցո՞ւք երկերիւր դահեկանի հաց, եւ տացուք դոցա ուտել (6, 37): Իսկ Պիղատոսը դարձյալ հարցրեց նրան. «Ոչ մի պատասխան չե՞ս տալիս. տե՛ս, ինչքա՛ն են քեզ ամբաստանում» - Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա, ոչի՞նչ տաս պատասխանի, տես քանի՛ ամբաստանեն զքե՛ն (15, 4): Ապա քահանայապետը կանգնելով մեջտեղում՝ Հիսուսին հարց տուեց ու ասաց. «Ոչինչ չե՞ս պատասխանում. այդ ինչե՛ր են վկայում դրանք քո դեմ»- Ապա յարուցեալ քահանայապետն ի մեջ՝ հարցանէր, զՅիսուս եւ ասէր, Ոչ ի՞նչ տաս պատասխանի, զի՛նչ դոքա զքե՛ն վկայեն (14, 60):

ե) Համադասական և ստորադասական հարաբերությամբ հարցումներ. Եվ նա բռնելով կույրի ձեռքից՝ գլուղից դուրս հանեց. նրա աչքերը թքով թրջեց և ձեռքը նրա վրա դրեց. և հարցնում էր կույրին, թե տեսնո՞ւմ ե՞ս - Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք յաչս նորա եւ ձեռն եդ ի վերայ նորա. եւ հարցանէր ցնա թե տեսանիցե՞ի՞նչ (8, 23): Հիսուս պատասխանեց նրանց և ասաց. «Չեք իմանում, թե ինչ եք խընդրում. կարո՞ղ եք խմել այն բաժակը, որ ես խմելու եմ, կամ մկրտվել այն մկրտությամբ, որով ես մկրտվելու եմ»- Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, ոչ գիտեք զինչ խնդրեք. կարե՞ք ըմպել զբաժակն զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն մկրտել զոր ես մկրտելոցն եմ (10, 38): Հիսուս նրան պատասխան տվեց և ասաց. «Տեսնո՞ւմ ես այդ բոլոր շինությունները. ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դրանց քարը քարի վրա չպիտի թողնվի, որ չքանդվի»- Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ, Տեսանե՞ս զայդ ամենայն շինուածս. ամէն ասեմ ձեզ եթե ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտեսցի (13, 2):

զ) *Տարակառուցվածք հարցումներ*, որոնցից առաջինի գրաբար տարբերակը բաղկացած է երկու հարցական նախադասություններից. Հիսուս նրանց ասաց. «Դուք երբևիցե չե՞ք կարդացել, թե ինչ արեց Դավիթը, երբ կարիք ունեցավ և քաղց զգաց ինքը և նրանք, որ իր հետ էին. թե ինչպես Աբիաթար քահանայապետի օրով մտավ Աստծու տունը և կերավ առաջավորության հացը՝ տալով նաև նրանց, որ իր հետ էին. մի բան, որ, բացի քահանաներից, ուրիշների համար օրինավոր չէր ուտել»- Եւ ասէ ցնոսա Յիսուս, ո՛չ երբեք իցէ ընթերցեալ ձեր զոր արարն Դաւիթ, յորժամ պիտոյն եղէ, եւ քաղցեաւ նա եւ որ ընդ նմայն էին: Զիա՞րդ եմուտ ի տունն Աստուծոյ առ Աբիաթարաւ քահանայապետիւ, եւ զհացսն զառաջավորութեան եկեր, եւ ետ եւ այնոցիկ որ ընդ նմայն էին, զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն (2, 25-26): Հիսուս պատասխան տվեց և ասաց նրանց. «Հենց դրա համար չե՞, որ մոլորված եք. քանի որ չգիտեք գրքերը և ոչ էլ Աստծու զորությունը, որովհետև, երբ մեռելներից հարութիւն առնեն, ո՛չ տղամարդիկ կին կ'առնեն և ո՛չ էլ կանայք մարդու կը գնան, այլ կը լինեն հրեշտակների նման, որ երկնքում են» - Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, ո՛չ վասն այդորիկ իսկ մոլորեալ եք, զի ոչ գիտեք զգիրս եւ ոչ զգորութիւնն Աստուծոյ: Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ

արք կանայս առնեն, եւ ոչ կանայք արանց լինին, այլ իբրեւ զհրեշտակս իցեն որ յերկինսն են (12, 24-25): Հիսուս պատասխան տվեց և ասաց նրանց. «... Իսկ զալով մեռելներին, թե հարություն են առնում, դուք չե՞ք կարդացել Մովսեսի գրքում, մորենու դրվագում, թե ինչպես Աստված ասաց նրան. «Ես եմ,- ասում է,- Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը և Յակոբի Աստվածը»- Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, ... Այլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն, ո՞չ իցէ ընթերցեալ ձեր ի գիրսն Մովսիսի ի մորենուցն, որպէս ասաց ցնա Աստուած, Ես եմ, ասէ, Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակովբայ (12, 24-26):

Բազմաբևեռ հարցումներ: Ինչպես արդեն ասել ենք, Մարկոսի Ավետարանում կան այնպիսի 7 բազմաբևեռ հարցումներ, որոնցում առկա է 14 *այո-ոչ* հարցական նախադասություն. 4-ը՝ երկու *այո-ոչ* հարցումների կազմում, 10-ը՝ *ինչու-որ* և *այո-ոչ* հարցումներից ձևավորված՝ երկտեսակ հարցական նախադասությունների կազմում:

ա) *Երկու այո-ոչ հարցումներից բաղկացած երկբևեռ հարցական նախադասություններ*. Եվ Հիսուս եկավ ու նրանց քնած գտավ. Եվ Պետրոսին ասաց. «Միմո՞ն, ննջո՞ւմ ես. չկարողացա՞ր մեկ ժամ արթուն մնալ: »- Եւ գա գտանէ զնոսա զի ննջէին, եւ ասէ ցՊետրոս, Միմովն, ննջես. ո՞չ կարացեր ժամ մի արթուն կալ (14, 37): Եվ նրանց ասաց. «Դո՞ւք էլ այդպէս անմիտ եք, չե՞ք իմանում, թե ամեն բան, որ դրսից մարդու մեջ է մտնում, չի կարող նրան պղծել, որովհետև ոչ թե նրա սիրտն է մտնում, այլ՝ որովայնը և դուրս ելնում և մաքրում բոլոր կերածները»- Եւ ասէ ցնոսա, Ա՞յդպէս եւ դուք անմիտ եք. ո՞չ իմանայք եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ՝ ոչ կարէ զնա պղծել. Զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ՝ որովայն, եւ արտաքս ելանէ, եւ սրբէ զամենայն կերակուրսն (17, 18-19):

բ) *Երկտեսակ երկբևեռ հարցումներ*, որոնցից առաջին երկուսի դեպքում սկզբում *ինչու-որ* հարցումն է, իսկ հետո՝ *այո-ոչ-ը*, իսկ վերջինի դեպքում՝ սկզբում *այո-ոչ-ն* է, հետո՝ *ինչու-որ-ը*. Եվ նրանց ասաց. «Ինչո՞ւ այդպէս վատասիրտք եք, չե՞ւ եւս ունիք հաւատս (4, 40): Արդ, նրանց ժողովարանում մի մարդ կար՝ պիղծ ոգուց բռնված, որն աղաղակեց, և ասաց. «Թույլ տուր, ի՞նչ ես ուզում մեզնից, Հիսուս Նազովրեցի. մեզ կորստյան մատնելո՞ւ եկար. գիտենք քեզ, թե ով ես դու, Աստծու Սուրբն ես»- Եւ էր ի ժողովրդեանն նոցա այդ մի, յորում այս պիղծ գոյր ի նմա. որ աղաղակեաց եւ ասէ. թոյլ տուր, զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանե՞լ զմեզ. գիտեմք զքեզ, ով ես, Սուրբդ Աստուծոյ (1, 23-24): Եվ ասաց նրանց. «Այս առակը չե՞ք հասկանում, ապա ինչպե՞ս պիտի հասկանաք բոլոր առակները:»- Եւ ասէ ցնոսա, Ո՞չ գիտեք զառակս զայս, եւ զիա՞րդ զամենայն առակսն գիտիցեք (4, 13):

գ) *Երկտեսակ քառաբևեռ հարցական նախադասություն*, որում առաջինը *ինչու-որ* հարցում է, իսկ հաջորդ երեքը՝ *այո-ոչ*. Հիսուս իմացավ նրանց խորհուրդը և նրանց ասաց. «Թերահավատներ, ինչո՞ւ եք ձեր սրբություն խորհում, թե հաց չունեք. դեռ չե՞ք հասկանում

և

չե՞ք

հիշում.

ապշուրթունքն է՝ ձեր մտքերը պատել»- Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա, Զի՞ խորհիք ի սիրտս ձեր, թերահաւատք, թէ հաց ո՛չ ունիք. տակաւին ո՛չ իմանայք եւ ո՛չ յիշէք. ապշուրթի՞ն ունի գսիրտս ձեր (8, 17):

դ) *Երկտեսակ հնգաբնէտ հարցական նախադասությունն*, որում առկա են չորս *այո-ոչ* հարցում եւ մեկ *ինչու-որ*. Հիսուս իմացավ նրանց խորհուրդը եւ նրանց ասաց. «... Աչքեր ունէք եւ չէ՞ք տեսնում, ականջներ ունէք եւ չէ՞ք լսում եւ դեռ չէ՞ք հասկանում ու չէ՞ք հիշում. երբ հինգ նկանակը բաժանեցի հինգ հազար հոգու, կտորտանքներով լի քանի՞ սակառ վերցրիք»- Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա, ... Աչք գոն եւ ո՛չ տեսանէք, ականջք են եւ ո՛չ լսէք, եւ ո՛չ իմանայք տակաւին, եւ ո՛չ յիշէք: Յորժամ գիինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ քանի՞ սակառի բարձէք զկոտորոցն լի (8, 17-19):

1. Այսպիսով, Մարկոսի Ավետարանում գործածված են վեց հարցատեսակներ՝ *ինչու-որ*, *այո-ոչ*, եղանականիշ, ընտրանքային եւ երկկերպ՝ զույգ ընտրանքայիններով հարցումներ:

2. Մեր տարբերակած հարցական նախադասություններից գործածված չեն երկկերպ (Ի՞նչ ես ուզում՝ ծիրա՞ն), երկկերպ ընտրանքային (Ո՞վ եկավ՝ Աշո՞տը, թե՞ Արամը) կցորդային (Լավ եղանակ է, չէ՞), համեմատական (Ավելի լավ չէ՞ մնալ, քան գնալ) եւ լրացուցիչ հարցումները (Արամը եկա՞վ: - Այո՛: - *Իսկ Սուրբ նը*: - Սուրենը նույնպես կգա):

3. Բոլորից շատ գործածված են *ինչու-որ*, ապա՝ *այո-ոչ* հարցումները, հետո՝ եղանականիշները, այնուհետև՝ ընտրանքայինները, իսկ վերջում՝ երկկերպ զույգ ընտրանքայիններով հարցումները:

4. Ընդհանուր առմամբ կա 31 *այո-ոչ* հարցում՝ 17-ը միաբնէտ են, իսկ 14-ը հանդես են գալիս բազմաբնէտ հարցումների կազմում:

5. Միաբնէտ հարցական նախադասությունները կազմված են պարզ կառուցվածքի եւ մեկ ստորադասական, երկու ստորադասական, համադասական, համադասական եւ ստորադասական հարաբերությամբ ու տարակառուցվածք բարդ հարցումներից:

Միաբնէտ հարցումներից 3-ը պարզ կառուցվածքի են, 14-ը՝ բարդ, 3-ը՝ մեկ ստորադասական, 2-ը՝ երկու ստորադասական, 3-ը՝ համադասական, 3-ը՝ համադասական եւ ստորադասական հարաբերությամբ, 3-ը տարակառուցվածք են:

7. Բազմաբնէտ հարցական նախադասություններից 2-ը միատեսակ հարցումներ են՝ բաղկացած երկուական *այո-ոչ* հարցումներից, իսկ 10-ը՝ երկտեսակ՝ բաղկացած *ինչու-որ* եւ *այո-ոչ* հարցումներից, որոնցից 3- ի կազմում կա մեկ *ինչու-որ* եւ մեկ *այո-ոչ* հարցում, 1- ի կազմում՝ մեկ *ինչու-որ* եւ երեք *այո-ոչ* հարցում, 1-ի կազմում էլ՝ մեկ *ինչու-որ* եւ չորս *այո-ոչ* հարցում: Փաստորեն, ստացվում է, որ մեր նշած բազմաբնէտ հարցական նախադասությունները բաղկացած են 2 միատեսակ երկբնէտ, 3 երկտեսակ երկբնէտ, 1 երկտեսակ քառաբնէտ եւ 1 երկտեսակ հնգաբնէտ հարցումներից:

ВОПРОСИТЕЛЬНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В ЕВАНГЕЛИИ ОТ МАРКА**ГУКАСЯН С. В.****Резюме**

В результате исследования как в восточноармянском, так и в древнеармянском вариантах Евангелия от Марка выявлено 100 вопросительных предложений, большая часть которых содержит местоименные вопросы. Вопросов типа “да-нет” значительно меньше, всего 31, из которых 17 – однополюсные, т. е. содержат только один вопрос, а 14 – многополюсные, содержат более одного вопроса. Однополюсные и многополюсные вопросы представляют собой простые и сложные конструкции, причем сложных вопросов (это в основном сложноподчиненные предложения) больше, чем простых.